ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԲԵԼԼԱ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր արտիստուհի Բելլա Դարբինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ավետ Ավետիսյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԵԼԼԱ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ վաստակավոր արտիստուհի Բելլա Դարբինյանը ծնվել է 1936թ. փետրվարի 10-ին Վանաձորում: 1955թ. ընդունվել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան, 1959թ. երաժշտական կրթությունը շարունակել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: 1962թ. ուսումը շարունակել է Մոսկվայի «Մեծ թատրոն»-ին կից ստուդիայում:

Հանդես է եկել Կարմենի, Ազուչենայի, Ամներիսի և շատ ուրիշ օպերային դերերով: Հետագայում գործունեությունը շարունակել է երգարվեստի էստրադային ոճում: 1966թ. ընդունվել է Հայաստանի ռադիոպետկոմի էստրադային սիմֆոնիկ նվագախումբ՝ որպես մենակատարուհի, որտեղ աշխատել է շուրջ 30 տարի: Նույն թվականին էստրադային երգերի մրցույթում շահել է ոսկե մեդալ և արժանացել ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչմանը:

Կատարել է նաև ժողովրդական երգեր, գուսանական ռոմանսներ և արժանացել բարձր գնահատականի հայկական երգարվեստի մեծերի կողմից:

Համերգներով հանդես է եկել Հայաստանում և արտերկրում: 2003թ. համերգներով եղել է ԱՄՆ-ում, որտեղ հետագայում թողարկվել է 2 ձայնասկավառակ:

Բելլա Դարբինյանը մահացել է 2005թ. Երևանում:

ՀՀ վաստակավոր արտիստուհի Բելլա Դարբինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ավետ Ավետիսյան փողոց, հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԵԼԼԱ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բելլա Դարբինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԵԼԼԱ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բելլա Դարբինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ